

ՌԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հաւար 12 Ֆր.
 Տարեկան 6 »
 Վեցամսեայ 6 »
 Արտասահմանի հաւար տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »

Անտիկաշի հաւար 3 սյր.
 Տարեկան 1.50 »
 Վեցամսեայ 1.50 »

Մանուցանել տողը սուս շին երեսին հաւար 40 ս իսկ վերին երեսի հաւար 20 սակրիս է. երեսին աւելի անգամներու հաւար 20 0/0 գեղջ կըլլայ:

Վառեայի հաւար մ'ոքի 10 սակրիս

ՇՈՒԱԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԷՆ ԲԱՂԱՊԵՍԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ՝ ՏՄՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔՈՒԱԹԻ ԵՒ ՇՈՒԱԿ ՕՐԵՐԸ

Mechanisch-Verlagsanstalt
 W. F. Kalemstein
 (Austria)
 Vienne

Редация на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна
 Redaction du journal
 „Charjoun“
 Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար
 մեոքի (20 ՈՒՆԻՍԻՄ)
 Պուշկարիոյ հաւար
 մեոքի (15 ՈՒՆԻՍԻՄ)

Գրուքիւնք էս չնն տրուի

«ՇՈՒԱԿ»-Ի ՌԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՃԵՆԳԻՆԸ ՊԵՏԷ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ



ՋԵՅԹՈՒՆՅԻՆ

ԻՐ ԵՐԳԸ

Ջէյթունցի եմ: Կարիճ ծնայ և կըրուով Ուռնացայ ևս լեռներուս մէջ անխորով. Կապրիճ մամոտ ժայռիս վրայ անըրեւան: Թէեւ չունիմ բերրի երկիր բարդաւան: Հայ գիւնոր եմ հարազատ, Լեռնական մը յա՛ր ազատ

Ապառաժի խոռոչներուն մէջ ծընայ, Կեանքըս համակ կըրու մըն էր անխընայ. Սարկու թիան անդունդները շինկայ դեռ, Բանդի սուրէս կարմիր արիւն կը կաթէր: Իմ լեռներուս մէջ ազատ՝ Ո՛չ ոք ինչեք ինձմէ զատ:

Հոգ չէ եթէ չունիմ լայն լայն դաշտ արօտ, Բանի կընամ ինքս շինել զէնք, վառօր. Բանի արեան, պատերազմի օրերուն՝ Չեմ մեղկանար սին յոյսերով օրորուն: Ջէնքով շրջիմ օրն ի բուն Ես, հայ կուռի արիւրուն:

Չունիմ հանձար, և ոչ տազանդ, կամ ուսում, ինձ կը բաւէ լոկ իմ հաստատ համոզում:

Թէ միշտ կուտով կընամ միայ ևս հրզօր.
 Պահել ազատ իմ հայրենի լեռն ու ձոր:
 Հայ գիւնոր եմ անվըհատ,
 Պիտի կուռիմ անընկէատ:

Չունիմ պալատ, չա՛տ իսկ է ինձ մի մերկ կիւղ,
 Սէք Տաւրոսի առեւծն եմ ես աներկիւղ.
 Իչխան չունիմ, միակ աէրն եմ ես իմին,
 Ճիրաններուս մէջ կը ճգմեմ թշնամին:
 Բուրդի պիկը Թուրք աղան՝
 Չախմախույնի կը դողան:

Օտարի քով չեմ փնտրուի ապաւէն,
 Իմ կեն թուրքս, իմ յայտախոյուն կը բաւեն:
 Պիտի իշխեմ վե՛կ լեռներուս քարքարոտ,
 Քանի օտար աջակցութեանց չեմ կարօտ:
 Կանանջ սարերն ի վեր ես
 Պիտի ինչքանիմ ժպտերես:

Մըրրիս եմ ես՝ ինչպիս չքնաղ իմ սարեր,
 Ասոր անոր գլուխ ձեռն չեմ սիրեր.
 Կամքըս ժայռ է, հոգիս անկուն գերթ երկին,
 Իմ վըրէժս զայրոյթն ունի փոթորկին,
 Կրու՛մ մղեմ փրկարար,
 Օտարներէն չեմ մուրար:

Անկախ կեանքի անընկճելի ես գուակ,
 Ծագրի չեղա՛յ-և չե՛մ ըլլար-նըրաւակ.
 Կըրուին վայրը կը սըլանամ միշտ անվտիս՝
 Մինչև մտնիմ գէնքը կուրծքիս ա՛լ խաղաղ:
 Հայ գիւնորն եմ ես անխոնջ
 Կեանքըս կըրու մէ՛ջ ամբողջ:

Երբ Հայաստան սուգ կը տիրէր ընդհանուր,
 Ես ժայթքեցի արաստեքի փոխան հուր.
 Չո՛ւ չըտուի համազգային սև՝ ջարդին,
 Չի ես գիտեմ սփռել ստրատի իմ շորտերն,
 Ես կը կուռիմ, չիյտեմ սուգ,
 Ձիյտեմ ո՛չ լաց, ո՛չ արցունք:

Օն՝ քուք հայի՛ր, ինձմէն առէ՛ք օրինակ,
 Չուր է ողբալ մե՛ծ վտանգին դէմ մինակ,
 Կեանքն է կըրու, ա՛լ բաւ արցունք, վիշտեր էին,
 Կուռի գաղէ՛ք հարուստ, աղքատ, տերտեր, կին:
 Օ՛ն, կուռեցէք անդադար,
 Թող չըտիրէ՛ ձեզ օտար:

ՋԵՅԹՈՒՆՆԻ ՀԱՄԱՐ

Գոհութեամբ ստացանք Սօֆիաբը-
 նակ Պ. Մ. Արծրունիէն 26 լէվ ար-
 ծաթ եւ լանձնեցիք սեղօյս Պատ.
 Թաղական խորհուրդին՝ իր նպատա-
 կին հասցրելու համար:
 Խմբ.

Խմբագրութիւն «Շարժում»
 Ներքակ ցուցակով միասին կը
 դրկենք ձեզ լէվ արծաթ 145.40, հան-
 գանակուած խաւքէյէն, Բայաճէ-
 թէն, Թիրնօվա-Սէյմէնէն, Սքօպէ-
 վօյն և Պօրխօվկրատէն:

Կայարան Բայաճէք

Բարկէն Ա. Սվաճեան	4.—
Օր. Եղիսաբէթ Յ Սըվաճեան	2.—
Կարապետ Մինասեան	4.—
Սարգիս Բօլէեան	1.—
Ազամ Թորոսեան	1.—
Ապրօ Աստուրեան	1.—
Ջօքար Սաչիկեան	2.—
Սերովբէ աէր Սարգիսեան	4.—
Մարտիրոս Սարգիսեան	1.—
Մանուկ Ղուկասեան	1.—
Սարգիս Մանուկեան	2.—
Տիկին մը	2.—
Սաչիկ Իկիթեան	1.—
Ալէքսան Ջաքարեան	1.—
Սարգիս Յովհաննէսեան	1.—
Տօնիկ Սարգսեան	4.—

Բաղաք Մասքէօյ

Բէրովբէ Թ. Աւետիսեան	5.—
Ղ. Կ. Թորոսեան	2.—
Ե. Թ. Աւետիսեան	2.—
Մանուկ Յակոբեան	1.—
Գրիգոր Պօղոսեան	2.—
Ո. Ո. Կարճեան	2.—
Սարգիս Յովհաննէսեան	4.50
ՈՏԻ	2.—
Լեւոն Պ. Բամպուքեան	1.50
Թաղէս Գեորգեան	2.—
Օնիկ Թազուրեան	4.—
Պօղոս Մկրտիչեան	0.50
Մասքէօյի զպրօցին փոքրիկ աշակերանները իրենց ուսուց- չին Աեքով	3.—
Սաչիկ Ազիսեան	1.—
Փիլիպպոս Թէքլիտաղցի	0.50
Գրիգոր Թազուրեան	0.60
Սարգիս Մկրտիչեան	1.—
Մարտիրոս Վարդանեան	1.—
Ստեփան Իպէճէտեան	0.50
Սարգիս Յովհաննէսեան	0.50
Տիկին Ա. Ետիսեան	2.—
Օհաննէս Արթիւրեան	2.—

(Շարունակելի)

Բիւրոյի անդամներն են պատկանում Պարբերական ստացուած է «Մշակ», «Նոր-Գար» մի օրինակ միայն, «Շարժում», «Հայրենիք», «Մուրճ», և «Տարազ», երբեմն էլ «Արարատ» բնօրոյ է, Պոլսոյ, Փարիզի և Միւրթարի տնտեսի թերթերից և ո՛չ մէկը է ստացուած:

Այս տարի Հաֆթ վաճառու կազմուցում «Լուսարանական» ընկերութիւնը, որ բաժանուի տրամադրու է և հետզհետէ աւելի ու աւելի համակիրներ է պանում: Մինչև այժմ արուած դասախօսութիւնները հասարակութեան կողմից ընդունուել են մեծ խնդակցութեամբ և համակրութեամբ: Ընկերութեան նպատակն է տալ հանրամատչելի դասախօսութիւններ գիտական ամեն ճիշդի վերաբերեալ, գեղարուեստական, զինգամտեսական և բարոյական գիտելիքներ մասին: Հաֆթ վաճառու անցեալ տարուանից կազմուել է «Ուսումնասիրաց» ընկերութիւնը, որի նպատակն է գործ տալ Սալմաստի հայոց ուսուցանողական գործին:

Ընկերութիւնների կարիքը իր սոցցալ է Սալմաստում, մանաւանդ զինգամտեսական, երեւում է ժողովորդի արդէն զգացել է պանդխտութեան հասցրած անբուժելի նարստաները և այժմ ճիգ է թափում սպրեւել հայրենիքում: Թէկուզ պան կերպով վաստակած կողմերով, ժողովուրդը կամայ-կամայ ըմբռնուած է, որ իր այնչափ հողերից օգտուել կարելի է և անհրաժեշտ է որ առաջ ձեռք առնել միջոցներ հողը մշակելու և ոչ թէ անպէտք երեսի վերայ թողնելու: Եղանակները կրեւում են և այն էլ Հաֆթ վաճառու: Երանի թէ այդ հասանքը մի

ուճեղ թափով վերջ դնէր պանդխտութիւնը՝ այդ սովորելի հրէշին և ազատէր 30 Օֆց աւելի մարդկանց անդամների կորուստից:

Սարգստայի - Տոչակ

... Խմբագրութիւն «Շարժում» լրագրոյ

Վառնա

Ազգագրութեան միջոցաւ մեծ ցաւով իմացանք որ՝ պաշտելի Չէյթուեի, Հայաստանի Սեւ Լեռան, այդ առեւծի ձագուկներու մէջ ծաղկախախ հիւանդութիւնը ճարակած է, որը օրական տասնհազ զոյներ կը տանի առ ի չգոյն բոչկի ու դարմանի: Կարի զգածուած անմիջապէս հանգանակութեան ձեռնարկները—որը մեր ամենաուսուրիական պարտականութիւնն էր—եւ զտաքած գուժարք խրկեցինք Պարբերագրան՝ ընդհուպ իր նպատակին գործածուելու համար:

Այս առթիւ կուզանք հրատարակու մեր մասնաւոր շնորհակալիքը յայտնել տեղւոյս թաղ. Խորհրդոյ ատենապետ Իանիէլ էֆ. Յովակիմեանին, որը ազնուարար արածեց մեր կողմէ պնակի մը շրջագայութիւնը՝ եկեղեցւոյ մէջ: Զատիկի ստուգուածն է՝ ոչնչպէս շնորհակալութիւններն այն ամեն ազնիւ ազգայնոց, որոնք մեր հրաւերը շնորհակալութեամբ կարողութեան շափով ստար հանդիսանալով այս գուտ մարդասիրական ձեռնարկին յաջողութեանը համար: Սակայն ցաւալի է ըսել թէ գտնուեցան այնպիսի ստոր արարածներ, որոնք ուղեցին մեր ձեռնարկը վիճեցնել իրենց ստոր զեւր բնարան ու նենա-

լով: Գանուեցան նաեւ կաշի-երես գուհիներ, որոնք հակադակ իրենց նիւթական բարեյաջող պայմաններուն, զլացան իրենց ետն իսկ հինգ սանդիմը ի նպաստ մեր պաշտելիներուն՝ հակառակ մեր խնդրանքին և թախանձանաց. անոնց ալ Զէյթուեցիներուն թՈՒԻԲ ու նողկանքը միայն:

Կը խնդրենք որ մեր ամենաժողովար թիւերէ միայն մէջ հրատարակէք ներկայ նամակը եւ ներկայ հաշուեցուցակը:

Հանգանակիչք

Յ. Մ. Պատմաճեւան

Գ. Մ. Մակնաճիւնան

Լ. Կ. Չալքընան

25 Մայիս 1903

Պաշտէշ

Ի. Խ.—Հաշուեցուցակը կը հրատարակուի «Շարժում» յաջորդ թիւերէն մէկով իր կարգին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ կիրակի յունիս 1, կէս օրէն առաջ ժամը 11-ին, նորակազմ ազգաստանում ընկերութեան ընդհ. ժողովը տեղի պիտի ունենայ Սանթրալի սրահին մէջ:

Կը խնդրուի բոլոր աղքատաւէր ազգայիններէ, որպէսզի, հաճին զալ և ներկայ գտնուիլ:

Առժամեայ Յանձնախումբ

1903 Մայիս 29

Վառնա

ՍՈՒԹԻՆ ԵՏԵՒ

Հինգ տարիներ կը լինէր որ Յասուն առել էր հայրենիքի արեւանոս շրթերէն հրաժեշտի վերջին համարոյրը և սակայն նա չէր մոտացել այն բողբոջը, որ հայրենի կողմ, սարը ու ձորը, ջուրն ու ծաղիկը խնայալից խօսել էին իրեն վերջին անգամ. նա յիշում էր այդ ամէնը:


Այդ հինգ տարւոյ ընթացքում, զարթել էր նրա մէջ մի ուրիշ բան, որը ոչ մայրը, ոչ հայրը եւ ոչ տէր տէրն էին սովորեցրել իրեն, և այն ծայրը որ մուծին ետեւէն հնչում էր, շատ եւ շատ զօրաւոր էր և բուռն: Այդ ուժը որ կզգար իր մէջը, առաջ ոչինչ էր, կաթիլ կաթիլ էր վաթած իւր սրտին մէջ և հիմա կազմել էր մի ուժգին հոսանք, որին ինքը չէր կարող զսպել ու սանձել եւ նա ուրախ էր:

Հայրենի օճախն հրաժեշտի համար շրթերը կայրէին, սարերին կակիծը իր սիրտը կը լեցնէին զայրոյթով և ջրին խնայուելը յոյզով, ի՞նչ ընէր, ո՞ւմ պատէր այդ ամէնը: Մարդկանց, բայց չէ՞ որ մարդիկ հասցրին նրան այս վիճակին. Աստուծո՞ւն, սակայն չէ՞ որ նա էլ չանսայով նոյն իսկ իր պարիկ քրոջ ձայնին յանձնեց նրան թրքի սրին: Հապտում պատէր, ո՞ր դիմէր: Որ որ ալ գնար նա օտար էր, իրան չէին հասկանում, ամեն կողմ ծով էր, ծով լայնատարած: Խիղճ, գուժ, սէր և պատիւ՝ շահը ծրարել մուծին մէջ: Միայն

ՀԱՅՐԱՍՊԱՆԸ

(ՊԱՏԿԵՐ)

Նուեւ. հայ պատեղիներուն



Հարուստ պատուելի մը անդրատնիկ ու մէկ հատիկ որդին էր Սմբատ իր ամբողջ մանկութիւնը իստն զոտ ու եռուղիտուն սղու մը իսկական սիւսն էր միշտ անհանգարտ միշտ շարժուն, միշտ աշխոյժ եւ ուշիմ. սակայն այդ ստրկութեան եւ վատթարացումի սպակառնիչ արիւտով թմբած նայապաշտելիներու ապուշ ոտանին մէջ, որ ըստ օրէ լըսած սին ու ահոնի քարոզներէն ահաբեկուած, սակաւ առ սակաւ պաշտելու թմբի սկսած էր, քանի կհանքի աւելի կփուն շրջաններուն մէջ կը յառաջանար:

Հօրը համբաւը շրջակաները շատոնց տարածուած էր արդէն, որպէս բարի եւ գթաւատ քրիստոնեայ պատուելի մը. հոգ չէ թէ ուրիշի մը ողորմութեան համար լուսայ մը տուած չըլլալով հանգիթ, անկուշտ վաշխառուի մը նման զանոնք մինչև ծուրը քերթած ու կեղեքած ալ էր անինայ, ոչխարի մը անմեղ դիմակին ներքեւ: Ու այս քարտիչի եւ զգթառատի հարստութիւնը չը կորսնցնելու անյազ տենչն էր պատճառը որ, պատուելին անյարմար գտնելով տղուն այս ընթացքը, նախապէս սկսած էր տանտաղութի եւ անոր արժանաւորներուն անունով ոտակացնել և զգուշացնել զայն, խրատելով միշտ հեզ լլալ, ուրիշին վը-

րայ ձեռք չը վերցնել. դիմացինը ըլլայ տուճիկ, լլալ քիւրա. ալ միշտ աննեց համար աղօթել, աղաչել որ Աստուած աննեց ձեռքէն սուրբ առնելով Անտարան մը տայ եւ նեն. եւ իրաւ որ շատ ալ զիւրին միջոցներ գաւաւ այդ շահարներ ստուտուրին պատրաստելու համար իր տղան: Ապաստիտ ու յանգուզն պատուներն դեռ հազիւ քաղաքի բողբոջական ներու հասարակ վաթարանը թողած, կարգ մը միսոնարներու թեւալուրութեամբ յանձնուեցաւ պատճառով Վրիգորի հայրական գործիքին, որ շատոնց Աւերիկայ իր Աստուածաբանութեան ընթացքը աւարտած եւ փութացած էր օխտարեալ երկիրը, հին լոյս սփռելու եւ Լուսաւորչին կարուսեալ անձովի հօտը Փրկչին փարսիք տանելու:

Ուայց ահա թէ ինչ կընար սովոր Սմբատ այդ տիւտար արարածին մօտ: —Հին ու նոր կտակարաններու ինչ ինչ դէպքերը եւ քիչ մըն ալ անդիւնէրէն կակազել, որոնք չէին բաւեր իր հօրը անպարագիր քղձանքներուն յագործք մը տալ: Ուստի, գեռ պատանեկան շրջանը չը բողբոջ մէկ հատիկ որդին, ապագայի անօրէն գործիք մը ընելու համար, կը զնէ շոգնուած ու կը դիլէ Լուստուն:

Ի՞նչ ըրաւ, ինչո՞ր պատանեցան տարիներու երկար ժամանակամիջոցի մը մէջ: Ատոնք իր կհանքին էն ունայն օրօրներն էին. մտաւոր հիւսանքներու ամբողջ ապուշ ու լուսն արիւթակի մը ընկերութիւնը հետադիտէ անտանիկ, անհանգուրժելի կը դառնար իրեն համար, կը գնէր անոնց կենցաղը ու ներքին մարդը, կը հետեւէր անոնցմէ ոմանց ամէն

մէկ քայլափոխին, ու սարսուռով կը խորհէր այն անուններուն եւ գործերուն վրայ, որոնցմով կը զարգուէին մարդկութեան այս ինչպիսի շահամոլները, շնորհիւ կայր ու յիմար ամբողջին: Չէ, Սմբատ չէր կրնար տանիլ այդ, պատանեկութեան ազգաս ու խորխտ հոգին, կարծես գերբնական ուժ մը մղեալ, տակաւ առ սակաւ բողբոջի սկսած էր իր մէջ: Գանի քանի անգամներ սուր ու խորաակիչ վիճաբանութիւններ ունեցաւ անոնցմէ ոմանց հետ, պոռայ վիճեց, միշտ յողթական, միշտ ջախ վախի ջախիչ փատերով ու հերքուեցներով: Ու անոնցմէ շատ, շատ վերջն էր, երբ, գրեթէ տկուտայ, առջին պարտեցաւ այն անոնի սպագան, որուն կը պատրաստուէր կուրօրէն ինքն ալ լոկ իր անպիտան հօրը գործիք մը դառնալու համար ու ալ բուպէ մը իսկ անկարող ըլլալով շարունակել այդ կհանքը, թողուց զպոռքը թողուց ամէն ինչ, ու սկսաւ հսկայ Լուստունի մէջ ազատ անկիւն մը որունի:

Ամբաներ վերջն էր, երբ բազդին մէ բարեգուշակ առիթով, օրօտն սաղտակալի անգործութեան ձանձրացած, ուղղուեցաւ Սէնդ ձէյմի Հօլի հսկայ արաններէն մէկը, ուր մեծ ձերուներն, իր վերջին ճառերէն մին պիտի արտասանէր, այն խեղճ տառապալ՝ այլ վնասնալ ազգին համար, զոր այնքան սիրած ու պաշտած էր:

Ծերուներին արտասանած բառերուն իւրաքանչիւր շեշտար, ձեռքերուն ամէն մէկ ջղաւտ շարժումները եւ այնքերուն խորհրդաւոր ջրապոմները, բողբոյն ալ տարբեր ու տարօրինակ

ներգործումները ըրին իր վրայ: Ան որ՝ մինչեւ այդ օրը՝ բուպէ մը իսկ չէր խորհած թէ ինք մէկ անհատը կը կազմէր ազգի մը, որ ժամանակին մարդկութեան փառքն ու պարծանքը ըլլալու պատիւն ունեցած էր, ու ապա անօրէն բռնակալներու ճնշումին ներքեւ ալ տանջուելով ու չարաչարուելով մինչև այժմեան տագնապալի դրութեան հասած—լսելով ձերուներն ատենախօսին խօսքերը, ցնցուեցաւ մէկէն.—օտարը աւելի՛ եռանդով կը գործէր իր սեփական ազգին համար: Անօթ մը, նախապէս մը սեպեց այդ ու մոռնալով ապագայի բողբոյն անուրջները, որոնց համար պատրաստել կուզէին զինք, ու խտեց այդ գթախտ հայրենիքին, ինչպիսի բայց գեռ վեհ այդ ազգութեան անձնուէր վիճաբանութիւնը հանդիսանալ:

Ու օր մըն ալ, ոչալս իտական գործիչ, նետուեցաւ ցաւասանջ երկիրը, հոն իր նոր ու Սրբազան շրջանը սկսելու:

Սնցան շարժմանը, ամբաներ ու... մինչև իսկ տարիներ, սակայն Սըմբատէն ոչ լուր կար եւ ոչ ալ գիտէին անոր ուր ըլլալը: Միայն գպրոցի աննչին միջոցաւ անոր յանկարծական կեռացումը իմացած էին իսկ աւելին մուծ էր, թէեւ այդ եւս բաւական էր իր բարեպաշտ ծնողքը հազարաւոր կասկածներու երթարկելու եւ անոնց ապագայի ծրագրները բողբոջին խորտակել, մանաւանդ պատ. Գրիգորին, որուն կէս մը Աւետարանին ու կէս մը քարագիշի խօսքերով լեցուն նամակները անպակաս էին ամէն ամիս, բայց ի՞նչ կրնային ընել:

Լուստուն

Տոչակ

(Շարունակելի)

լուում էր հեռուոր արկած ծովին մոնչիւնը. քամիին սոյլը եւ վզաւը. մոնչում էր ծովը, սեղմում էր Յա- սոյին սիրտը եւ հառաչանքներ դուրս թռչում իր կրծքից:

Քամին անցնելով ծովերի վրայից բերում էր իրան ականջին աւելի սեւ երազներ ջաւը ու կակիճը, ողոր ու աղաղակը. նա ծնդում է, հովը փսփսում է հրաժեշտի օրուման նազարաթր. եւ սիրտը փղձկում է խնդրում իրան:

Կրակի արեան հոտեր էր բերում այդ քամին. այն ուժը որ գարթել էր իրա մէջ մութին ետեւէն գոռում ու գոչում էր թէ արեան մեղանով պէտք է դրել հայրենիքի աղիւսը. վառօքի մրուրով սրբիլ ճակարի վատութեան սեւը, կրակի ու հրացանի բոմբիւ- նով պէտք է դիմել Աստուծուն եւ մարդկանց. ու այն ժամանակ եր- կուան էլ կը ծնդուին, Աստուած կիջ- յէ իր աթոռից եւ մարդիկ իրան կը վազեն օգնութեան:

Եւ Յասուն բացաւ այդ մութին ե- տեւ գոնուող վարագոյրը եւ մէջը խորատուզուեց պարզած յեղափոխա- կան գրօջը. վրէժ, վրէժ, կանչե- լով:

Անուշաւան

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ասկէ առաջ գրած էինք թէ Սուչովայի մէջ գտնուող հայ եկե- ղեցի մը Լուսեթականներու յանձ- նուած է Եւսթմ պոլտոյ թերթե- րէնկիմանանք թէ այդ եկեղի- ցին ոչ թէ Սուչովայի մէջ, այլ Աւստրիոյ Պուքովինա գաւառին Հոռումա քաղաքին մէջ գլխաւո- րաբար Սուչովայի հայերուն նու- էրներովը շինուած:

Մալազկերտի երկրաշարժին մասին Բագէշի առաջնորդ, փո- խանորդէն Պատրիարքարան հա- սած նամակի մը համաձայն կա- ռավարութիւնը միջոցներ ձեռք կառնէ պէտք եղած օգնութիւն- ները և կարգադրութիւնները ընելու համար: Անասուններու և կարասիներու վնասը խիստ մեծ է և տունները բոլորովին տակնու- վրային: Առաջնորդական փոխա- նորդը աւարտելով իր նամակը զարձեռալ կը շնչտէ նպաստի ան- հրաժեշտութիւնը:

Վանայ մէջ սկսուած է կեդ- րոնական հայկազեան վարժարա- նի մը շինութիւնը: Քարային նիւթերու բաժինը արդէն աւար- տած է, իսկ աղիւսային նիւ- թեղեմները պատրաստուած են շարուելու համար, այսպէս փու- թով հասցուած բաւարար նպաս- տի մը կը կարօտի շէնքը օր ա- ռաջ լինելու համար: Վանի ժո- զովուրդը Պոլսոյ Պատրիարքա- րանէն կը յուսայ այդ նպաս- տը:

Խաչիկ Լեոնեան անուն անձ մը Վան գտնուող անգղիացի բրոֆէսորի մը 40 լիրայի ծախսեր է մէկ երկու հին ձեռագիր աւե- տարաններ, որոնք պոլսական

թերթի մը թղթակցին ըսելովը աղքային պրական հարստութիւն մը կրնային կազմել:

Մանդուկի մէջ կը կար- դանք թէ Նիւ-Եւրոքի Հայ բողո- քականներու հովիւ պատ. Յով հաննէս Պ. Կարապետեան, Աւե- տարանի 23 թուով Տ. Մուշեղ վարդապետի ուղղած մէկ նամա- կին մէջ կըսէ. «սթէ անաշառ էք անկարելի է որ Լուսաւորչա- կանութեան մէջ գտնուած ռակին ու կղկզանքը շտեմնէք և անկա- րելի է որ ռակին ամուր բռնելով կղկզանքը մէկդի շնեա՞ք»: «Հարկ կղգանք, կաւելցնէ Ման- ղումէն, յայտարարել այս սողե- րուն հեղինակին թէ Լուսաւորչա- կանութեան մէջ կղկզանք չկայ և եթէ ինք կը պնդէ որ կայ, Լու- սաւորչականութիւնը ապահովա- պէս իր մէջէն գուրս նետած է կղկզանքը: Մենք, ինչպէս Լու- սաւորչականութեան, նոյնպէս ալ պատուելիի մը բերնին ու Աւե տարանի մը սիւնակներուն անար- ժան կը գտնենք կղկզանքը.....»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Րուսմանիոյ պուլկար հարուստ- ներէն հանգուցեալ Էվլօկի Կեօր- կիէվ իր կաակով ութը միլիոն Փրանք թողած էր պուլկարական համալսարանի մը գործածուելու համար: Այս գումարը այժմ ամ- բողջովին կը գանուի Պուլկարա- կան Ազգային գրամատուցը և հանրային Լուսաւորութեան նա- խարարը կուզէ եղեր առաջար- կել որ այդ գումարով նոր շէնք մը շինուի Օֆիսիոյ Համալսարանի համար, որովհետեւ հիմա գոր- ծածուող շէնքը շատ անյարմար է:

Կը կարծուի թէ Օֆիսիոյ Պետական դատարանը՝ դատի եւ- թարկուած նախկին նախարար- ներու մասին իր վճիռը պիտի արձակէ ամենէն ուշը մինչև յա- ռաջիկայ յունիսի 2ը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱԿԵՂՈՒՆԱ

Ամսոյ 24ին 16 պուլկարներէ բաղկացած խումբ մը յարձակեր և արդիւր է կառախուճելին գը- նաջքը Սէլանիկէն 14 հազարա- մէթը հեռու: Անմիջապէս զօր- քերուն լուր տրուելով կառաջի կռիւ մը սկսեց է երկու կողմէն և տեւեր է քանի մը ժամ: Ապս- տամբները շնորհիւ իրենց ուժմ բերուն յաղկուեցին հեռանալ: Սէլանիկի ժողովուրդին մէջ մեծ իրաբանցում տիրեր է երբ իմա- ցել են թէ նորէն ուժմբեր նետ- ուած են:

Երկուշաբթի օր Սէլանիքի

Ձիւնորական Գատարանին մէջ հիւպատոսներու և բազմաթիւ ունկնդիրներու ներկայութեան՝ կարգաթուէր է դատարանին վճի- ւռը, որով մահուան կը գատա- պարտուին Փրանսական շոգեմա- լին ահափեկիչը Բալէլ Բօչէվ, և պանդային վրայ յարձակող 3 պուլկարները: Մարքօ Օթօյանօֆ Միլան Արսէնէֆ և Պօկտան:

Սմսոյ 22ին Գրաթովի լեռ- ներուն վրայ մեծ ընդհանրում մը տեղի ունեցած է 37 ապս- տամբներէ բաղկացած խումբ մը և մօտ 3000 թուրք զինուորներու միջև և կռիւը երկար տեւելով 137 թուրքեր և պուլկար մը միայն սպաննուած են: Տաճիկներուն մեծ վնաս տուած են մանաւանդ ապստամբներուն նետած ուժմբե- րը: Յաղթուած և ցրուած զօր- քերը իրենց վրէժը լուծելու համար յարձակած են շատ գիւ- ղերու վրայ ու բազմաթիւ պուլ- կար զիւղացիներ սպաննուած, վիրաւորված կամ բանտարկուած են:

ՍԵՐՊԻՍ

Պէլկրատի մէջ ամսոյ 29ին գիշերը տեղի ունեցեր են սոս- կալի դէպքեր: Աստուան ժամը 2ին ճրդ գունդը պաշարելով թագաւորական պալատը՝ զուն գին մէկէն երկու սպայներ պա- լատ թագաւորին քովը երթալով՝ յանուն ժողովուրդի և բանակի կը պահանջեն թագաւորէն հրա- ժարելը իր գահէն: Թագաւորը առանց նոյն իսկ պատասխանելու վայրկենապէս ստրճանակի հար- ուածով մը կըսպաննէ զայն, իսկ միւս սպան քաշելով իր տարճա- նակը կըսպաննէ թագաւորը: Յե- տոյ յաջորդաբար կըսպաննուին նաեւ Տրակա թագուհին, իր եր- կու եղբայրները, Օերպիոյ նա- խարարացեա և արտաքին գոր- ծոց նախարար Զինձար Մարքովիչ ու պատերազմական նախարարը: կը վիրաւորուի նոյնպէս ներքին գործոց նախարարը:

Յետոյ անմիջապէս ազատական Ավուքումովիչի նախարարացե- տութեամբ բոլոր կուսակցութիւն- ներու պատկանող անձերէ նոր նախարարութիւն մը կազմելով ձեռք առու երկրին առժամա- նակեայ կառավարութիւնը:

Նոր կառավարութեան կողմէն ընդունուած է մինչև 1901 թու- ականը տիրող սահմանադրու- թիւնը, իսկ անկէ վերջը ստեղ- ժուած բոլոր օրէնքները ոչնչաց- ուած են և նոյն տարուան Սքուպ- չիեան պիտի գումարուի Յունիս 20ին: կըսուի թէ, Քարակեօր- կէվիչը թագաւոր հրատարակե- լու համար:

Այս մեծ յեղափոխութիւնը պազարիւն կերպով, նոյն իսկ

գոհունակութիւնով գիմուսեր է Օերպ ժողովուրդը: Տեղի չեն ունեցած ուէջջութութիւններ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գարմշտատի հայ ուսանողու- թիւնը յայտնում է, որ Հայտու- բերգում գտնուած հայ ուսանո- ղական գրադարանը, որը նպաս- տակ ունէր ծանօթացնել և դիւ- րութիւն տալ հայկական կեանք- քով, հարցով և գրականութեամբ հետաքրքրողներին (ոչ միայն Հայաստանից, այլ և միւս քա- ղաքներում) տեղափոխուել է Գարմշտատ և միացել է տեղույս հայ ուսանողական գրադարանի հետ, որը որ միեւնոյն նպատա- կին էր ծառայում:

Գրադարանը ունի յիշեալ նպատակով հայ և օտար լեզու- ներով հրատարակուած գրքերի մը համեմատ թիւ, որի գրացու- ցակը ուղարկում ենք հետաքրք- րույններին: Մենք յոյս ունինք, որ կգան ին անձեր և հիմարկու- թիւններ, որոնք զարկ կուան առաջ տանելու այդ համակրելի նպատակը, աջակցելով մեզ թէ գրամով և թէ գրքերով (հայ և օտար լեզուներով): Նամակնե- րը և նուէրները գրադարանին մէրաբերեալ ուղարկել հետեւեալ հասցեով:

Տարջստ սկզովարդեղոր 55 Տ Մեղիֆ Եան Նազուրեանց:

Ի Գիմայ Հայ Աւսանողութեան Տ. Մեղիֆ Եան Նազուրեանց

ՊԱՏԿԱՐԱՆՆԵՐ ԿԱԶՄԵՆ-ԵՐԳԱՐԱՆ

Լոյս տեսաւ «Վազգէն»-Երգարանը, բանաստեղծութիւններու, աղբյուրի յեղափոխական, սիրային և ժողովր- ղական երգերու ճոխ հաւաքածուն, որուն անհամբեր կ'սպասէր ընթեր- ցասէր հայ հասարակութիւնը:

600 մեծագիր երեսներէ բաղկացած, ընտիր թուղթի վրայ, հեղեղիկ պատկերներով զարդարուն, սոյն եր- գարանը մեծ պակաս մը կուգայ լրացնելու մեր ազգատիկ գրականու- թեան մէջ:

Գինն է, ճամբու ծախքով 1. 50 Գինի փոփազողները դիմելու են ֆ. Հորսնիսն 319 Բ. Օ. Պօստ, Լիե Մաս. (Ի. Ս. Ա.):

Ձեռքէ կը ծախուի նաեւ Հայրենիքի տպարանին մէջ

Հայրենիքի Բուպ. Բօ. Յի հուկ Ս. Պօստի Մաս. (Ի. Ս. Ա. Արասահմանի համար 5 Փրանք Պարկաստանի համար 4 Փրանք

Մանօթ. — Սոյն երգարանը որպի- օր քանի մը անձերու անհատական յանգերով հրապարակ ելած է, սա- կայն ամբողջ հատկութեւ յատկաբու- թէ զուտ բարեփրական գործի մը:

ՀՐԱՏԱՐԱՆԿԻ ԶԵՆՐ

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна